ՎՐԻԺԱՌՈՒԹՅԱՆ ՃՆՇՈՒՄԸ

Ներածություն

Որպես Քրիստոսի հետևորդներ՝ մենք պետք է տանք հետևյալ հարցը. «Արդյո՞ք վրեժը՝ այն ուտեստն է, որը պետք է սառը մատուցել, թե՞ ավելի լավ է՝ ընդհանրապես չմատուցել այն»: Այս շաբաթ խմբակներում դուք խոսում էիք վրիժառության ճնշման մասին: Զավեշտական է, որ այս դասի գլխավոր միտքն է՝ «Համբերությամբ արձագանքեք, երբ ձեր հանդեպ սխալ են վարվում»: Գուցե աշխարհը համաձայնվեր «համբերությամբ արձագանքել» այն պայմանով, որ հետագայում հնարավոր լիներ ինչ-որ հատուցում ստանալ: Մի՞թե հենց սա ի նկատի ուներ մեր աստվածաշնչյան հեղինակը՝ գրելով հալածվող երիտասարդ քրիստոնյաներից բաղկացած իր լսարանին. **«Երկայնամիտ եղեք դուք էլ, հաստատեք ձեր սրտերը, որ Տիրոջ գալուստը մոտեցել է»**: Այլ կերպ ասած՝ ինչի՞ համար մենք պետք է համբերատար լինենք. մենք պետք է սպասենք ճիշտ ժամանակին՝ վրեժ լուծելու համար, թե՞ ճիշտ ժամանակին, երբ Աստված կիրականացնի Իր ծրագրերը:

Քրիստոնեական վարք

Քրիստոնեության մեջ սահմանված է «Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես» սկզբունքը: Քանի որ համաձայն քրիստոնեության բարոյագիտական նորմերի՝ «քո ընկերը» նաև «քո թշնամին» է, մենք բախվում ենք մեր թշնամիներին ներելու տհաճ պարտականությանը:

...Եվ կեսը ձեզանից արդեն ուզում են հարցնել ինձ. «Ինչպե՞ս դուք կարող էիք ներել Գեստապոի զինվորի, եթե լեհ կամ հրեա լինեիք»:

Ես չեմ փորձում ասել ձեզ այս գրքում, թե ի՛նչ ես կարող էի անել, քանի որ ես շատ բան չեմ կարող: Ես պատմում եմ ձեզ, թե ինչպիսի՛ն է քրիստոնեությունը: Ես ինքս չեմ հորինել այն: Բայց ուսումնասիրելով այն՝ ես գտնում եմ անմիջապես դրա կենտրոնում «Ների՛ր մեր մեղքերը, ինչպես մենք ենք ներում մեր դեմ մեղանչողներին»: Չկա նույնիսկ թեթև ակնարկ այն մասին, որ ներումն առաջարկվում է մեզ այլ պայմաններով: Պարզ և հասկանալի կերպով գրված է, որ եթե մենք չներենք, ուրեմն չենք ներվի: Սա միանշանակ է: Ուրեմն, ի՞նչ անենք:

Միևնույն է՝ ներելը բավականին դժվար է լինելու, բայց կարծում եմ՝ մենք կարող ենք երկու բան անել, որ ավելի հեշտացնենք այն: Մաթեմատիկա ուսումնասիրելիս դուք չեք սկսում մաթեմատիկական անալիզից, այլ պարզ գումարումից: Նույն կերպով, եթե՝ մենք իսկապես ցանկանում ենք (բայց ամեն բան կախված է իսկապես ցանկալուց) սովորել, թե ինչպե՛ս ներել, միգուցե ավելի լավ կլինի, որ սկսենք ավելի հեշտ բանից, քան Գեստապոյի զինվորին ներելը: Կարելի է սկսել ձեր ամուսնուց կամ կնոջից, ծնողներից կամ երեխաներից, և ներել նրանց ինչ-որ բանի համար, ինչ նրանք ասել են կամ արել են անցյալ շաբաթվա ընթացքում: Հավանաբար, որոշ ժամանակ դա բավական կլինի ձեզ համար: Եվ երկրորդը՝ մենք կարող ենք փորձել հասկանալ, թե իրականում ի՛նչ է նշանակում՝ սիրել ձեր ընկերոջը ձեր անձի պես: Ես պետք է սիրեմ նրան՝ ինչպես ինձ: Իսկ ինչպե՞ս եմ ես սիրում ինձ:

Կ. Ս. Լյուիս, «Հասարակ քրիստոնեություն» (1952), Գիրք 3, Գլուխ 7

Այսօր մենք կտեսնենք, թե ի՞նչ Հիսուսն ասաց և արեց՝ որպես օրինակ մեզ համար: Եկե՛ք առաջին հերթին կարդանք Հիսուսի խոսքերը Մատթեոս 5:38-42-ում և Մատթեոս 26:50-54, 65-68-ում, իսկ հետո տեսնենք, թե ինչպե՛ս Հիսուսը վարվեց այն գիշեր, երբ Նրան ձերբակալեցին և կանգնեցրին ատյանի առջև, երբ Նա, անկասկած, բախվեց վրիժառության ճնշմանը:

Մատթեոս 5:38-42
Մատթեոս 26:50-54, 65-68

Մատ. 5:38-42 - Լսել էք՝ ինչ ասուեց. «Աչքի փոխարէն՝ աչք և ատամի փոխարէն՝
ատամ»: 39 Իսկ ես ձեզ ասում եմ. չարին հակառակ չկանգնե՛լ **(ponēros causing pain**
and trouble). այլ ով որ ապտակ տայ քո աջ երեսին, միւսն էլ նորան դարձրու: 40 Եւ
եթէ մէկը կամենայ քեզ բռնադատել և քո շապիկն առնել, նրան քո բաճկո՛ն էլ թող: 41
Եւ եթէ մէկը քեզ հարկադրի մի մղոն ճանապարհ անցնել, նրա հետ երկո՛ւ էլ գնա: 42
Տո՛ւր նրան, ով քեզնից խնդրում է. և ով կամենում է քեզնից փոխ առնել, երես մի՛
դարձրու նրանից:

I. ՄԵՐԺԵՔ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

Հիսուսի ուսմունքն այս հատվածում մյուս երեսը դարձնելու մասին հինգերորդ դեպքն է այն վեցից Լեռան քարոզի մեջ, երբ Նա մեջբերում էր օրենքի ավանդական մեկնությունը («**Լսել եք, որ ասվել է**»), և առաջարկում այլ՝ ծայրահեղ մեկնություն Իր հետևորդների համար («**Բայց Ես ասում եմ ձեզ**»): Այս դեպքում, հարցը վրիժառության սահմանն էր: Հին Կտակարանի ուսմունքի («աչքն աչքի փոխարեն») նպատակն էր՝ որոշել առավելագույն սահմանը, ըստ որի մարդը կարող էր վրեժ լուծել: Հաշվի առեք, որ այն բանից առաջ, երբ Մովսեսը տվեց իսրայելցիներին այս չափանիշը (Ելից 21:24, Ղևտացիների 24:19-20, Երկրորդ Օրինաց 19:21), չկար ոչ մի որոշված սահման վրիժառության համար: Ինչ-որ մեկը հանել է ձեր աչքը կռվի ժամանակ: Հանե՛ք նրա երկու աչքը: Դուք կորցրել եք ձեր ատամը ծեծկռտուքի ժամանակ ավտոկայանատեղիում: Այրե՛ք այդ մարդու տունը: Այնպես որ, ըստ օրենքի՝ «Աչքն աչքի փոխարեն»-ը վրիժառության ոչ թե նվազագույն, այլ առավելագույն ընդունելի չափն էր:

> ***Օրինակ:*** *Ծնն. 34:25 - Եւ եղաւ երրորդ օրը, երբոր նորանք ցաւի մէջն էին, Յակոբի երկու որդիքը Շմաւոնը եւ Ղեւին՝ Դինայի եղբայրները ամեն մէկն իր սուրն առաւ, եւ համարձակ մտան քաղաքը, եւ սպանեցին ամեն արուն.*

Այնուամենայնիվ, օրենքը չէր ենթադրում, որ այս չափը պարտադիր էր: Ահա թե որտե՛ղ Հիսուսը փոփոխություն բերեց: Այն պատշաճ ձևերը, որոնցով Հիսուսի հետևորդները պետք է պատասխանեին իրենց հետ սխալ վարվող մարդկանց, **ողորմությունը և շնորհքն էին:**

II. ՇՆՈՐՀՔՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԵՔ.

χάρις - charis
grace, as a gift or blessing brought to man by Jesus Christ, (b) favor, (c) gratitude, thanks, (d) a favor, kindness.

χάρισμα - charisma
a gift of grace, an undeserved favor.

Դուք գիտեք այս բառերի սահմանումները: **Ողորմությունը նշանակում է՝ ազատել պատժից այն մարդուն, ով արժանի է դրան: Շնորհքը նշանակում է՝ պարգևներ տալ ինչ-որ մեկին, ով արժանի չէ դրանց:** Հիսուսն ասում է, որ հենց այս կերպով մենք կարող ենք պատասխանել (և պետք է պատասխանենք) այն մարդկանց, ովքեր սխալ են վարվում մեր հանդեպ: Ինչո՞ւ: Որովհետև Աստված հենց այսպես է պատասխանել մեզ:

Հիսուսը երեք օրինակ պատմեց «ևս մեկ մղոն անցնելու» մասին՝ խոսելով մեր և մեր թշնամիների փոխհարաբերությունների մասին: Իրականում, «ևս մեկ մղոն անցնել» արտահայտությունը գրված է հենց դրանցից մեկում:

- «***Մյուս երեսը դարձրո՛ւ»***: Ըստ «NIV Study Bible notes, Նոր Միջազգային թարգմանության Ուսումնական Աստվածաշնչի» նշումների՝ այս հունարեն բառը նշանակում է՝ **<u>ապտակել մեկի երեսին</u>**՝ վիրավորանք հասցնելու համար, ոչ թե տևական ֆիզիկական բռնություն իրականացնել: Նա ցանկանում էր ասել, որ ավելի լավ է՝ դիմանալ վիրավորանքին երկու անգամ, քան կռիվ բորբոքել:
- «***Տո՛ւր քո շապիկը և բաճկոնը»***: Շապիկը ներքնաշոր էր, իսկ բաճկոնը՝ արտաքին հանդերձ: Հին Կտակարանի օրենքն արգելում էր խլել մարդու արտաքին հանդերձը (Ելից 22:26-27), քանի որ այն պաշտպանում էր նրա մարմինը: Բայց Հիսուսը սովորեցրեց Իր հետևորդներին, որ նրանց ապահովությունը և պաշտպանությունը լինելու է իրենց երկնային Հորից, և ոչ թե այն հագուստից, որը կախված է նրանց պահարանում (Մատթեոս 6:28-31):
- «***Երկու մղոն գնա»***: Հիսուսի օրերում, ամեն հռոմեացի զինվոր իրավունք ուներ հարկադրել ցանկացած իսրայելցու մինչև մեկ մղոն տանել իր իրերը : Բայց այն քաղաքացին, ով քրիստոնյա էր և ներկայացնում էր Հիսուսին, անում էր շատ ավելին, քան պահանջվում է:

Այս երեքն էլ շնորհքի պատասխաններ են: Հիշեք մեր շնորհքի սահմանումը. պարգև ինչ-որ մեկին, ով արժանի չէ դրան: Ամեն անգամ, երբ մենք շնորհքով ենք պատասխանում՝ վրիժառության փոխարեն, մենք հիշեցնում ենք ինքներս մեզ այն մասին, թե ի՛նչ Քրիստոսն արեց մեր փոխարեն: Եվ բացի այդ՝ մենք հայտնում ենք Քրիստոսին աշխարհի մարդկանց, ովքեր տեսնում են մեզ:

III. ՀԻՇԵՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿԸ.

Հիսուսը պարզապես ինչ-որ վերացական գաղափար չներկայացրեց Իր հետևորդներին: Ամեն ինչ իսկապես դատարկ և անիրատեսական կլիներ, եթե Նա Անձամբ չվարվեր ըստ Իր խոսքերի: Այնպես որ, եկեք ավարտենք մեր միացյալ ժամանակը՝ տեսնելով, թե ի՛նչ Հիսուսն արեց այն իրավիճակում, որում կարող էր ուժ կիրառել և վրեժ լուծել:

Մատթեոս 26:50-54, 65-68

> **Մատ. 26:50-54 -** Իսկ Յիսուս նրան ասաց. «Ընկե՛ր, սրա՞ համար դու եկար»: Այն ժամանակ, մօտենալով, ձեռք բարձրացրին Յիսուսի վրայ ու նրան բռնեցին: 51 Եւ ահա Յիսուսի հետ գտնուողներից մէկը ձեռքը երկարեց և իր սուրը հանեց ու հարուածեց քահանայապետի ծառային և նրա ականջը կտրեց պոկեց: 52 Այն ժամանակ Յիսուս նրան ասաց. «Քո սուրը ետ դիր իր տեղը, որովհետև, ովքեր սուր են վերցնում, սրով կ՚ընկնեն: 53 **Եւ կամ կարծո՞ւմ ես, թէ չեմ կարող իմ Հօրն աղաչել, որ նա հիմա ինձ համար այստեղ հասցնի հրեշտակների աւելի քան տասներկու գնդեր:** 54 Էլ ինչպէ՞ս պիտի կատարուէին Սուրբ Գրքերում գրուածները, թէ՝ այսպէս պէտք է լինի»:
>
> **Մատ. 26:65-68 -** Այն ժամանակ քահանայապետը պատռեց իր զգեստներն ու ասաց. «Հայհոյեց, էլ ինչի՞ են պէտք մեզ վկաներ. ահա հիմա լսեցիք նրա հայհոյանքը: 66 Ի՞նչ է ձեր կամքը»: Նրանք պատասխանեցին ու ասացին՝ մահապարտ է: 67 Այն ժամանակ թքեցին նրա երեսին, բռունցքով հարուածեցին նրան, և ոմանք էլ ապտակեցին նրան ու ասացին. 68 «Մարգարէացի՛ր մեզ, դո՛ւ, Քրիստո՛ս, ո՞վ է, որ քեզ հարուածեց»:

Եկեք պարզապես մի կողմ դնենք բոլոր մեկնաբանություններն այն մասին, որ Հիսուսն անզոր խաղաղարար էր, Ով թույլ էր տալիս, որ բոլորը քայլեին Իր վրայով: **Այն, ինչ Նա ասաց խոսք 53-ում, ցույց է տալիս, որ Նա անհավատալի ուժ ուներ:** Հիսուսը չէր ձգտում վրեժ լուծել կամ հատուցում տալ մարդկանց, որովհետև Նա գիտեր՝ այն ամենը, ինչով Նա անցնում էր, ավելի մեծ նպատակ ուներ: Եթե Նա կանչեր «տասներկու գունդ հրեշտակների» պարտեզում՝ Իրեն օգնելու համար, խոսքը չէր կատարվի, և մեր փրկությունն անհնարին կլիներ: Նույն կերպով, եթե մենք որոշենք ինքներս տնօրինել իրավիճակները, երբ մարդիկ սխալ են վարվում մեր հանդեպ, մենք կարող ենք խափանել այն մեծ ծրագիրը, որն Աստված ունի մեզ համար:

Ամփոփում

Վրիժառության ձնշումը նախևառաջ գալիս է այն պատճառով, որ մենք չենք ցանկանում թույլ թվալ ցանկացած մարդու: Բայց ուշադրություն դարձնելով Քրիստոսի օրինակին՝ մենք հասկանում ենք, որ պահանջվում է ավելի շատ զորություն վրիժառությունից հրաժարվելու, քան հաշվեհարդար տեսնելու համար: Միգուցե դուք ոխ եք պահել ինչ-որ մեկի վրա երկար ժամանակվա ընթացքում և պարզապես ճիշտ ժամանակվա եք սպասում՝ նրան հատուցելու համար: Թույլ տվեք խրախուսել ձեզ, որ շարունակեք սպասել: **Հռոմեացիների 12.19-21-ում գրված է.**

> *«Ձեր անձերի համար վրեժխնդրություն մի՛ արեք, սիրելիներ, այլ բարկության տեղ տվեք, որովհետև գրված է՝ Վրեժխնդրությունն Իմն է. Ես հատուցումը կտամ, ասում է Տերը: Արդ եթե քո թշնամին սոված է, հա՛ց տուր նորան, և եթե ծարավ է, ջո՛ւր տուր*

նորան, որովհետեւ այս անելով՝ կրակի կայծեր կժողովես նորա գլխի վրա: Մի՛ հաղթվիր չարից, այլ բարով հաղթի՛ր չարին»:

Վրեժը՝ այն ուտեստը չէ, որը պետք է սառը մատուցել. այն ընդհանրապես պետք չէ մատուցել: